

ԿՐՑՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Արդ, եղերուք դուք կատարեալ, որպէս և
Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

Մատ. Ա. 18:

Ամեն բնածին, շնչաւոր թէ անշունչ, ընդունակ է
կատարելագործուելու, ուրեմն կատարելագործուելը բնա-
կան է. հետեարար անհրաժեշտ պէտք է և պարտաւորա-
կան:

Մարդկային գիտակցութիւնը այդ ընդունակութիւնից
օգտուելով, պակասիչ հրաշայի հետեանքների է հասել,
ի կիր արկանելով արուեստաւորական միջոցներ, կատա-
րելագործութիւնը իդէալ է:

Մարդու վերաբերմամբ կատարելագործութիւնը երեք
միջոց ունի. ֆիզիքական, բարոյական, մտաւոր. և երեքն
էլ իրարից կախուած, իրար հետ կապուած՝ կազմում են
միութիւն, իրար լրացնող ամբողջութիւն:

Մարդու ետորակ և մի կատարելութիւնը կոչոււմ է
լուսաւորութիւն, որ է հետեանք դաստիարակութեան:

Լուսաւորուած մարդու նշանակներն են ներդաշնա-
կութիւն և շափ, այսինքն մենք մեր սեպհական օգուան
ըմբռնելով, պիտի գիտակցարար ջանանք մեր կեանքը
ենթարկել որոշ կանոնների, միշտ հսկելով մեր վրայ և
դապելով մեզ:

Մեր կեանքը պիտի մի ներդաշնակ, ճշկրիտ որոշ թիւ-
վանկերով և իրար յարմար յանգեբով ստանաւորի նմանի

կամ երաժշտական մի երգի, կամ ձևերով և գոյներով ներգաշնակ, բուրալի մի ծաղկի։ Մեր ամեն շարժումը, գործողութիւնները, մտածմունքը պիտի լինին յանդաւոր—*PHIΛΑΝΘΟ*, և շափաւոր—*ΤΑΚΤΗΧΟ*։ Այդ մեզ պէտք է տայ դաստիարակութիւնը, որի տարրերն են՝ կրօն, գեղարուեստ, գիտութիւն։

Ի նկատի պիտի ունենալ այս արքայաման, որ քանի մենք կենդանի ենք, ամեն բան մեր վրայ տալաւորութիւն է գործում, բնութիւնը, միջավայրը, մարդկանց շրջանը, ուսումը, այնպէս որ, դաստիարակութիւնն է մեր վրայ գործում տալաւորութիւնը։ Անհուն տալաւորութիւնների յորձանքներում գեկավար ճարտարապետ պիտի լինին հոգևորականները, պետական անձինք, մանկավարժները, գրողները, գիտնականները, գեղարուեստագէտները, միահամուռ պիտի ջանան մարդկանց տանել դէպի կատարելութիւն դաստիարակութեան միջոցով ցանկալի ուղղութեամբ։

Կատարելութիւնը պիտի սկսել միաժամանակ և ընդհանուրից և անհատից, դա անհրաժեշտ է, փասն զի անհատը ընդհանուրի համար է և ընդհանուրը անհատի։ Մարդկութիւնը նախիր չէ, այլ բաղկացած է դիտակից, ինքնուրոյն, ինքնավար անհատներից, անձնիւր պատասխանատու միաւորներից, որոնց մէջ պէտք է ուսնացնել և հիմնաւորել ինքնակատարելագործութեան ձեռներեցութիւնը, անհատների ինքնագիտակցութեամբ և կատարելութեամբ գլուխ կը գայ և ընդհանուր մարդկութեան կատարելութիւնը։

Հեթանոս դարերում անհատի պաշտամունք՝ կուլա՝ չը կար, կային ամբոխ, մարդկանց նախիր մէկի համար, որին աստուածացում էին իսկ, բռնապետութեան, սարկութեան դարեր էին։

Քրիստոս եկաւ անհատն ազատագրելու, որով ընդհանուր մարդկութիւնը փշրեց սարկութեան շղթաները։

Ո՛հ, ինչ սքանչելի և սրտաշարժ հանդէս, հովիւք թողնու՛մ է իննսու՛ն և ինն ոչխարք և գնում է որսնում մի մտորուած, կորուսուած ոչխարին և կրք գանում է, գնում է իւր ուսի վրայ բերում ու ինդութիւնից հրաւիրում է բարեկամներին միասին ուրախանալու: Հայրք իւր անառակ սրդու դարձի գալու՝ առթիւ, սրտի բերկրութիւնից, պարարակ եզն է մտքիւմ և ինչոչք սարքում:

Քրիստոս մարդկանց բնակավայրից վճնդուած բորտին, հակառակ ընդհանուրին, ձեռք է տալիս և բժշկում, նոյն Քրիստոս աշակերաններին սլափուէր է տալիս՝ թէ գնացէք, քարոզեցէք Աւետարանը ընդհանուր աշխարհին: Քրիստոս քարոզում է ժողովրդի բազմութեան, բայց առանձին մեկնում է ամեն բան աշակերաններին, վասն զի այդ բնարեւոյ անհատների զարգացումը կարեւոր է ընդհանուրի համար: Հրատարակներում սովորեցնող Յիսուսը՝ մենաւոր կերպով գրուցում է նիկողիմոսի և Սամարացի կնոջ հետ՝ անհատը փրկելու համար, ուրեմն նա նուիրուած է և ընդհանուրին և անհատին: Քրիստոս անհատն ազատագրելով՝ մարդկութեան նոր արշալոյս բացուեց:

Մասն ընդհանուրից, ընդհանուրը մասից, երկու են յատկութեամբ, մի են բնութեամբ, պահանջներով. տարբերութիւնը շափի, գործավարութեան մէջ է: Մարդը աշխարհումն է և աշխարհը մարդում, իմաստունները մարդուն անուանած են «կոսմոս», այսինքն մի ամբողջ աշխարհ, և թէ մէկը բոլորի համար, բոլորը մէկի: Աւրեմն աշխատեցէք ձեր անհատական կատարելութեան համար այն համոզմունքով թէ դա հանուր մարդկութեան օգտին է, եսականը ստրուկ է ինքն իրեն, հրէշ է, ընդհանուր մարդ-եզրայր-ընկերոջ սիրով տողորուած է կանանաւոր մարդ-անհատը:

Ընդհանուրը նպատակ ունենալով, մենք պիտի անհատներ որսանք, որոնց բարձրագոյն կատարելութեան հասցնելով, նրանցով մակարտենք բոլորը, ինչպէս որ

Քրիստոս սրտչ թիւ ընդունակ աշակերաններ ընտրելով և
երեք տարի նախապատրաստելով, նրանցով յեզաշըջեց
մարդկութեան բարոյական աշխարհայեացքը: Քրիստոս,
երբ աշակերաններին ասում է՝ արարից դձեց որսորդս
մարդկան, նա ի նկատի չունի լոկ անհատների փրկու-
թիւնը, այլ նրա բուն նպատակն է ընդհանուրը, սրովհետեւ
ընական մեթոդն է մասնաւորից դէպի հանուրը, մօտիկից
հեռուն, հեշտից բարդը գնան:

Յիշիր, որ հասարակական պարտք է քո անձի և քո
ընտրած գործի կատարելագործումը, վասն զի դու մասն
ես ընդհանուրի, առանց որի բարեբաւս կեանք չը կայ
քո համար. յիշիր, որ կատարելագործութեան օրէնք է
կրկնութիւն և վարժութիւն:

Իւրաքանչիւր անհատ ինքն էլ ինքնակրթութեամբ
պիտի պարապի, անձնիւր սրտչելով դիպցիպլին, կարգա-
պահութիւն, հնազանդութեամբ ենթարկուելով ընդհանուր
թեքիմին օժէնքներին:

Գնում ես հասարակաց աղօթքի եկեղեցի. այդ ան-
հրաժեշտ է, ինչպէս և լինել ինքդ քո մէջ առճար Աստու-
ծոյ և ունենալ մինչև քո կոչման կէտը առանձնական,
սրտառուչ աղօթքի ժամեր:

Էսում ես եկեղեցում հաճութեամբ քարոզ, անձնա-
պէս էլ պարտ ես ամեն օր սուրբ գրքից խոկալով կար-
դալ, այլ և հոգևոր գրքեր և յօդուածներ:

Յաճախում ես դպրոցներ, համալսարաններ դիտու-
թեան տիրանալու. անպայման պիտի առանձնակի ինքն-
աշխատութեամբ էլ շատ բան ձեռք բերես քո ինքնուրոյն
անհատականութիւնը զարգացնելու համար:

Այցելում ես մատենադարաններ, ընթերցարաններ,
պատկերահանդէսներ, թանգարաններ. շատ գովելի է. աշ-
խատի ինքդ էլ քո համար ունենալ գրքեր, մի թերթ,
մասնագրելով և ուրիշներին. հաւաքի գոնէ մի քանի հնու-
թեան իրեր, նկարներ:

Գնում ես համերգ, դասախօսութիւն, ներկայացում.

ինքդ էլ սիրիր երգել, նուազել որ և է գործիքով, նստա
խմանալ:

Հաճոյք ես գգում հասարակաց ծաղկանոցում, ինքդ
էլ պահի ծաղիկներ ամաններում:

Հարատակում ես հասարակաց օրէնքներին, կարգերին.
ինքդ էլ քո համար մշակի և անշեղ հետևի նրանց:

Կրօնով կը լինիս բարոյական-առաքինի, գեղարուեստ-
ներով կը լինիս ճաշակաւոր, յանգաւոր, շափաւոր մարդ:
գիտութիւններով կը լինիս լուսամիտ մարդ:

Մարմնամարզը, սպորտը, ֆիզիքական աշխատանքը,
կեր ու խումի, քնելու շափաւորութիւնը քեզ կը դարձնեն
երկաթի պէս քաջասողջ, երկարակեաց:

Վերոյիշեալների համադումարը քեզ կանէ կատարեալ,
դու կը լինիս պիտանի քեզ և քո մերձաւորն. այդ է տի-
պար կեանքը և կատարելութիւնը. յիշիր, որ Հայր Աս-
տուածն է մեր իդէալը. ինչ վե՛ն խորհուրդ:

Ն. Վ. Տ. Ա.

Ս. Էջմիածին.

23 գնկա. 1917.

